ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2015 թվականի N 176-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ <<ՄԵՆՔ ՈՒԽՏ ՈՒՆԵՆՔ ՄԻՇՏ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ>> ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՎ <<ՍՅՈՒՆԻՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՐ ԼՂՀ-ՈՒՄ>> ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՊԱՆ ԵՎ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) և 1.19 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեի մասին>> օրենքի՝ <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով նախատեսված հատկացումների, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքում <<Մենք ուխտ ունենք միշտ դեպի լույս>> ավանդական միջոցառում կազմակերպելու նպատակով Կապան քաղաքային համայնքին տրամադրել 939.7 հազար դրամ, <<Սյունիքի մշակութային օրեր ԼՂՀ-ում>> միջոցառում կազմակերպելու նպատակով Գորիս քաղաքային համայնքին՝ 900.0 հազար դրամ, նրանց հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2015թ. դեկտեմբերի 24
ք. Կապան